ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 4876-Ա «02» դեկտեմբերի 2025թ.

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿՈԼՈՒՄԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՈԳՈՏԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս.Մանուկյանի գրությունը և «O-city» ընկերության կողմից ստացված հրավերը՝ «In-Motion» թեմատիկ աշխատաժողովին մասնակցելու նպատակով.

1. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Մանուկյանին՝ 2025 թվականի դեկտեմբերի 2-ից 5-ը ներառյալ գործուղել Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտա:
2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ ավիատոմսի, որն իրականացվում է «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:
3. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Սարգիս Մանուկյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ընկերության տնօրենի տեղակալ Արսեն Ներսիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ